Քարաբերդ

Վարչական ղեկավար՝ Կոլյա Ասատրյան

Հեռ՝ 077-62-02-25

Մակերես՝ 26.3կմ^2

Բնակչություն՝ 1103

qaraberd.shirak@mta.gov.am

Գյուղ Մարալիկի տարածաշրջանում, Մարալիկ քաղաքից 7կմ հարավ-արևմուտք, մարզկենտրոնից գտնվում է 32կմ հեռավորության վրա: Նախկինում ունեցել է Դաշգալե, Դաշխալե, Կարաբերդ, Տաշկալա անվանումները: Դաշղալան Քարաբերդ է վերանվանվել 1947 թ-ին: Նախկինում մտել է Երևանի նահանգի Ալեքսանդրապոլի գավառի մեջ:
Գյուղը գտնվում է ալիքավոր հարթավայրում՝ ծովի մակարդակից 1900մ բարձրության վրա: Կիման բարեխառն լեռնային է, ձմեռը տևական, ցուրտ, հաստատուն ձնածածկույթով: Լինում են ուժեղ քամիներ, հաճախակի են մառախուղները և ձնաբքերը: Ամառը տաք է, համեմատաբար խոնավ: Տարեկան տեղումների քանակը 500-600մմ: Բնական լանդշաֆտները սևահողային լեռնատափաստաններ են: Ունի բազալտի և ավազի հանքեր, որոնք ունեն արդյունաբերական նշանակություն:
Գյուղում եղել են մասնակի ավերվածություններ 1988 թ-ի դեկտեմբերի 7-ի երկրաշարժից:
Գյուղի տարածքում հին մատուռի տեղում՝ 1866 թ-ին կառուցվել է եկեղեցի, որի բակում թաղված է գյուղի հիմնադիր Գևորգ Բրուտյանը: Շրջակայքում կան հին բերդի ավերակներ:
Գյուղի բնակչության նախնիները գաղթել են Արևմտյան Հայաստանի Ալաշկերտի, Մուշի, Խնուսի, Բասենի շրջաններից 1829-1830թթ: 1873 թ-ին գյուղն ունեցել է 622, 1897 թ-ին՝ 933, 1926 թ-ին՝ 1000, 1939 թ-ին՝ 1079, 1959 թ-ին՝ 822, 1970 թ-ին՝ 987, 1979 թ-ին՝ 1002, 1989 թ-ին՝ 1013 հայ բնակիչ: Ըստ ազգային վիճակագրական ծառայության տվյալների համայնքը 2013 թ-ի հունվարի 1-ի դրությամբ ունեցել է 1103 մարդ: Սեռային կազմում տղամարդիկ կազմում են 47%, կանայք՝ 53%: Տարիքային խմբերը բաշխված են հետևյալ կերպ. մինչաշխատունակներ՝ 29%, աշխատունակներ՝ 51%, հետաշխատունակներ՝ 20%: Ունի 131 տնտեսություն: Ունի դպրոց, գրադարան , բուժկետ, կապի հանգույց:
Գյուղատնտեսական հողահանդակները գրեթե ամբողջությամբ օգտագործվում են որպես վարելահողեր՝ կազմելով 915հա: Պետական հողերը գլխավորապես օգտագործվում են որպես վարելահողեր, արոտավայրեր, կազմելով համապատասխանաբար 173 և 1340 հեկտար:
Գյուղատնտեսության մասնագիտացման ուղղությունը կաթնամսատու անասնապահությունն է: Զբաղվում են հացահատիկային, կերային կուլտուրաների, կարտոֆիլի մշակությամբ:
Համայնքի հիմնախնդիրների մեջ կարևորվում են դպրոցական գույքի նորացումը, խմելու ջրագծերի վերանորոգումը, գյուղամիջյան ճանապարհների վերանորոգումը, գյուղատնտեսական մթերքի իրացումը, գազաֆիկացումը:

ՀՀ Շիրակի մարզ, գ. Քարաբերդ

Ինդեքս՝ 2901